

Հայ Դատի յանձնախումբը Գանատայի Պրիթիշ Գոլումպիոյ նահանգի նախարար Ատրիան Տիքսի հետ քննարկեց Արցախի հիմնահարցը



Ուրբաթ, 25 Յունուար 2019–ի յետմիջօրէին, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի անդամ ընկ. Վահէ Անտոնեան եւ Գանատայի Հայ Դատի Արեւմտեան Շրջանի ատենապետ ընկ. Յակոբ Տէր Յակոբեան աշխատանքային հանդիպում մը ունեցան Պրիթիշ Գոլումպիա նահանգի Առողջապահութեան նախարար Ատրիան Տիքսի հետ, նախարարին Վանդուլըրի գրասենեակին մէջ:

Հանդիպման ընթացքին նախարարին ներկայացուեցաւ Արցախի Հանրապետութեան եւ ժողովուրդին ներկայ իրավիճակը, արձանագրուած յաջողութիւններն ու մարտահրաւէրները, ինչպէս նաեւ անդրադարձ կատարուեցաւ զանազան երկիրներու եւ նահանգներու զօրակցութեանց ու աջակցութեանց մասին:

Ընկերները, Հայ Դատի անունով, հրաւիրեցին նախարարը, որ այցելէ Արցախ եւ Հայաստան: Նախարարը ընդունեց հրաւերը եւ վստահեցուց, որ ամենէն յարմար առիթին պիտի իրականացնէ սոյն այցելութիւնը: Ան խոստացաւ նաեւ Արցախն ու հայութիւնը յուզող զանազան հարցերու քննարկման համար յատուկ հանդիպում մը ձեռնարկել Գանատայի վարչապետին հետ, որպէսզի կարելի ըլլայ սկիզբ տալ համագործակցութեան գործընթացի՝ նշեալ հարցերուն դժով:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը ընտրեց նոր ներկայացուցիչ

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը հերթական նիստում ԳՄ ներկայացուցիչ ընտրեց Իշխան Սաղաթէլեանին:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմին

ՀՅԴ ներկայացուցիչները հանդիպում ունեցած են Ռուսաստանի դեսպանին հետ

ՀՅԴ Բիւրոյի նախագահ Արմէն Ռուստամեան, Բիւրոյի անդամներ Սպարտակ Սէյրանեան, Արսէն Համբարձումեան եւ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեան Փետրուար 5–ին հիւրընկալուեցան Հայաստանի Հանրապետութեան մօտ Ռուսաստանի Դաշնութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Սերգէյ Կոպիրկինին կողմէ:

ՀՅԴ ներկայացուցիչները տեղեկացուեցած են վերջերս տեղի ունեցած ՀՅԴ 33–րդ Ընդհանուր ժողովին, ընդունուած հիմնական որոշումներուն, Արցախի հիմնախնդրին եւ արտաքին քաղաքական հարցերուն վերաբերեալ կուսակցութեան մօտեցումներուն մասին:

Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուած է նաեւ հայ–ռուսական դաշնակցային փոխգործակցութեան հետագայ զարգացման հարցերուն:

Հայաստանի Դրօշը, Օրհներգն ու Զինանշանը մեր պետականութեան յարութեան եւ անկախութեան պատգամները նուիրականացնող սրբութիւններ են

Հ.Յ.Դ. Բիւրոն՝ օրհներգի փոփոխութեան բանավէճի մասին

Մամուլին մէջ լայն շրջանառութիւն ստացան օրհներգը փոխելու վերաբերեալ քննարկումները: Հասարակական ցանցերու վրայ հարցը հրապարակ հանած էր Ազգային ժողովի փոխնախագահ, «Իմ Քայլը» խմբակցութեան անդամ Ալեն Սիմոնեան՝ արժանանալով բուռն քննադատութեան թէ՛ Սփիւռքի եւ թէ՛ Հայաստանի մէջ:

Հ.Յ.Դ. Հանրային կապերու գրասենեակի թղթակիցը հետեւեալ հարցումով դիմած է Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Սաղաթէլեանին: Մանրամասնութիւնները կարգալ էջ 4:



Թորոնթոյի «Առաջնորդի ընթրիք»ը պսակուեցաւ մեծ յաջողութեամբ



Կարդալ էջ 5

«Հորիզոն» շաբաթաթերթը հարցազրոյց ունեցաւ Գանատայի Արտաքին Գործոց նախարարուհի Քրիստիա Ֆրիլանտի հետ



Կարդալ էջ 4



2018
PILOT

MSRP
STARTING FROM
\$40,390*

2018 PILOT SHOWN

*Taxes not included. Visit Honda Gabriel for more details.

**HONDA
GABRIEL**

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777

www.hondagabriel.com

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian





MARCHÉ ADONIS

Un univers de fraîcheur

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé
Place Vertu - DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /



«Ի զուր չէ, որ հանրային կարծիքը նրան է համարում Հայաստանի Հանրապետության հիմնադիրը». Յունուար 29-ին լրացաւ Հայաստանի Հանրապետության հիմնադիր Արամ Մանուկեանի մահուան 100-ամեակը

Բուն անունը Սարգիս էր կամ Սերգէյ Յովհան-նիսեան, Վանում դարձաւ Արամ Մանուկեան: Ծնուել էր Ղափանի Զէյվա գիւղում, արհեստաւորի մի համեստ ընտանիքում, 879-ին: Ծնողների չքաւորութեան պատճառով դառն մանկութիւն ունեցաւ: Շուշիում դերձա-կութիւն անող եղբօր օգնութեամբ աւարտեց Ագուլեաց ծխական ուսումնարանը եւ 1890-ին մտաւ Շուշիի Թեմական դպրոցը:

Աշխատասէր, ուշիւմ եւ ընդունակ տղայ էր Արամը: Սիրուած էր ուսուցիչներից եւ ընկերներից: Աչքի էր ընկնում մտաւոր դարգացումով եւ եռանդով մասնակցում էր աշակերտական խմբակներին: Շուշիի Թեմական դպրոցը, այդ տարիներին, յեղափոխական խմբումների կեդրոններից էր: Դաշնակցութեան ազդեցութիւնը տիրական էր աշակերտութեան մէջ, հակառակ որ տեսչութիւնը գտնուում էր պահպանողականների ձեռքին: Արամի դպրոցական ընկերներն էին ապագայ Իշխանը, Մենակը, Իսաջանը եւ ուրիշ ըմբոստ գաղափարական երիտասարդներ: Բախումը աշակերտութեան եւ տեսչութեան միջեւ անխուսափելի էր: Ի վերջոյ, մի խումբ աշակերտներ, որոնց թուում էր Արամը, խռովայոյզ ցոյցերից յետոյ, ոստիկանական ուժով վտարուեցին դպրոցից:

Արամը, Իշխանը եւ մի քանի ուրիշներ ընդունուեցին Երեւանի Թեմական դպրոցը, ուր իրենց հետ բերին դաշնակցական գաղափարներն ու ոգեւորութիւնը: 1901-ին, աւարտելով Երեւանի Թեմական դպրոցը, Արամը անցաւ Պաքու՝ աշխատելու համար բանուորութեան մէջ, ուր շուտով աչքի ընկաւ, իբրեւ եռանդուն դաշնակցական գործիչ: 1903-ին, եկեղեցական կալուածների գրաւման օրերին, Արամը Պաքուի Կենտր. Կոմիտէի կողմից ուղարկուեց Գանձակ՝ ինքնապաշտպանութեան գործով, ապա անցաւ Կարսի շրջանը, որ դաշնակցական գործունէութեան եռուն վայր էր այն օրերին: Այնտեղից գէնք ու գինամթերք էր փոխադրւում Երկիր, խմբեր էին կազմակերպւում՝ Երկիր մտցնելու համար: Այնտեղ էին Սեբաստացի Մուրատը, Թորգոմը, Իշխանը, Իսաջանը, Մենակը եւ ուրիշ գործիչներ ու հայրուկներ: Աննկարագրելի եռուզեր եւ ոգեւորութիւն էր տիրում շրջանում:

Արամը ամբողջ թափով փարեց յեղափոխական խմբերի պատրաստութեան: Ինքն էլ մտադիր էր մտնել Երկիր, բայց տկար առողջութիւնը արգելք եղաւ: Իրար յետեւից խմբերը անցան սահմանը՝ փութալով Սասունի օգնութեան եւ ճանապարհին շատերը բնաջնջուեցին ուսնների եւ թուրքերի ձեռքով: Սպանուեցին եւ Արամի



մտերիմները՝ Թորգոմը, Իսաջանը, Մենակը: Կարսի շրջանը այլեւս դարձաւ անտանելի նրա համար: «Խիղճս ինձ տանջում էր, գրում է նա իր յուշերում, որ ամէնքը գնացին եւ նահատակուեցին, իսկ ես կարծես մի խորամանկութեամբ յետ մնացի»:

Արամը հեռանում է Կարսից՝ Սասուն անցնելու մտադրութեամբ, բայց Թիֆլիսում իմանում է, որ Սասունը ընկել է, եւ Հ.Յ.Դ. Բիւրոյի առաջարկութեամբ, 1904-ի աշնանը, մեկնում է Վան, ուր գտնւում էին արդէն Իշխանը եւ Վահան Փափագեանը (Բժիշկ): Այսպիսով սկսուեց նրա գործունէութիւնը Վասպուրականում, որից դուրս եկաւ Վանի Արամը:

Արամի կեանքն ու գործունէութիւնը Վանում, մինչեւ 1906ը, երբ նա, Իշխանի հետ, մեկնեց արտասահման Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. Ժողովին մասնակցելու համար, պատմուած է իր յուշերում («Հայրենիք» ամսագիր, 1922-ի թիւ 2-ից սկսած):

Արտասահմանում Արամ մնաց մօտ կէս տարի: Ընդհանուր ժողովից յետոյ, նորից վերադարձաւ Վան, ուր հետզհետէ կենտրոնական դիրք գրաւեց: Այդ

շրջանի դէպքերը մանրամասնօրէն նկարագրուած են Վ. Փափագեանի «Իմ Յուշեր»ի Ա. Հատորում:

Սահամանադրութիւնից յետոյ, Արամը մի տարի ուսուցչութիւն արաւ Օրդուում: 1911 թուականը անցկացրեց ժրնեում: Եւ դարձեալ մի տարի Օրդուում ուսուցչութիւն անելուց յետոյ, վերադարձաւ Վան: Ու այնուհետեւ, Արամը եղաւ Վասպուրականի Դաշնակցութեան ղեկավար ու մղիչ ոյժը՝ Իշխանի, ապա Ա. Վուսմեանի հետ: Ինչպէս Ռոստոմը բովանդակ Դաշնակցութեան մէջ, Արամը ամէն ինչ էր Վասպուրականում. դպրոց, ազգային հաստատութիւններ, մամուլ, ժողով ու հանդէս երիտասարդական շրջաններ, գաւառ, Աղթամար, յարաբերութիւններ կառավարութեան հետ – ամէն բանի վրայ տիրական էր Արամին միտքն ու հոգին:

Վրայ հասաւ համաշխարհային պատերազմը: Վուսմեանն ու Իշխանը զոհ գացին նենգ դաւադրութեան: Արամը մնաց մենակ ղեկավար դիրքերում՝ անօրինակ աղէտի առջեւ: Եւ հերոսամարտը, որով փրկուեցաւ Վանը, կազմակերպուեց ու վառուեց Արամի ուժեղ բազուկներով: Եւ երբ 1915-ին Վասպուրականը ազատուեց մահացու վտանգից, բնական կերպով Արամը կրօնուեց նահանգապետութեան: Նա միակ մարդն էր, որի հեղինակութիւնը այդ օրերին ճանաչում էին ամէնքը – ե՛ւ նրանք, որ այսօր երկիւղածութեամբ ու պաշտամունքով արտասանում են նրա անունը, ե՛ւ նրանք, որ կրքից կուրացած՝ սեւացնում են նրա յիշատակը:

Արամի նահանգապետութիւնը կարճ տեւեց – ընդամէնը չորս ամիս: Այնուհետեւ յաջորդեցին աղէտաւոր նահանջները ուսն բանակի, եւ Վասպուրականի հայութիւնը տեղահան ու հողմավար եղաւ: Բայց Արամը երբեք չդաւաճանեց նրան, մնաց նրա մէջ ու նրա հետ, եւ գերմարդկային ճիգ թափեց մեղմացնելու համար նրա տառապանքը:

1916-17 թուականները Արամը անցկացրեց Թիֆլիսում: Մասնակցում էր Ազգ. Բիւրոյի եւ Հ.Յ.Դ. Բիւրոյի աշխատանքներին, բայց առաւելապէս զբաղուած էր Վասպուրականի եւ այլ վայրերի գաղթականների գործերով: Մի պահ ծանր յօդացաւը անկողին ձգեց

Ի Զուր... Ծար. էջ 6

Սիմոն Վրացեան
«Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութեան 1890-1950», Պոպոլն

 Aline Shnorhokian Mortgage Advisor Tel: 1 866 231-8876 Fax: 450 688-7555 Cell: 514 797-1375 aline.shnorhokian@cibc.com 	Groupe Sutton - Performer Inc. 123 Place Frontenac Pointe-Claire, QC H9R 4Z7  ALBERT ARKILANIAN Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker aarkilanian@sutton.com Cell: 514.962.8822 Bur: 514.426.9595 Fax: 514.426.9596 *certaines conditions s'appliquent 	  VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS GABRIEL Kevork Asadourian Directeur des ventes - usagé Sales Manager - Pre-Owned kasadourian@gabriel.ca 7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4 Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967 www.nissangabriel.com • www.hondagabriel.com
École De Conduite AZIG Driving School Tel: 514-336-1110 Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II	Personal & Corporate Tax Returns Financial Statements Bookkeeping Business Plan NATALIE SKAFF, CPA, CGA Comptable Professionnelle Agréée Chartered Professional Accountant nat.skaff@gmail.com Tel: (514) 963 3363 2866 Rue De Chamonix Saint-Laurent, Québec H4R 3B7 	BRING YOUR OWN WINE NAZARETH CLASSIC GRILL 550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com
SAMUEL TOPALIAN 450 682-1644 AUTO SAMSON  MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT 4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.	 ՀԱՅԿ ԽԱՐԺՈՒՆԻԱՆ Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker C 514.574.6162 B 514.333.3000 	NETTOYEUR MARIE-CLAIRE CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTREAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

Թորոնթոյի «Առաջնորդի ընթրիք»ը պատկուեցաւ մեծ յաջողութեամբ



«Առաջնորդի ընթրիք»ը Գանատայի Հայոց Թեմի մեծ ընտանիքին համար դարձած է աւանդութիւն, որ կը համախմբէ մեր Թեմի եկեղեցիներուն ծառայողները, Ազգային Առաջնորդարանին բարերարներն ու բարեկամները: Մոնթրէալի «Առաջնորդի ընթրիք»ի անախարհացի յաջողութիւնէն ետք, Օնթարիոյ եւ Թորոնթոյի եկեղեցիներուն հոգեւոր եւ աշխարհական ծառայողներն ու համայնքի մեծ ընտանիքը եւս, Շաբաթ, 2 Փետրուար 2019-ի երեկոյեան, Թորոնթոյի Հայ կեդրոնին մէջ ներկայ եղան «Առաջնորդի ընթրիք»ին՝ ի նպաստ Ազգային Առաջնորդարանին, հովանաւորութեամբ ու ներկայութեամբ Թեմիա Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեանի, նախագահութեամբ տէր եւ տիկին Վահէ եւ Հռիփ Թորմաքճեաններուն եւ կազմակերպութեամբ Առաջնորդարանի Օնթարիոյ Կանանց Խորհուրդին:

Աւանդական ընթրիքին ներկայ էին հոգեւորականաց դասու Կրօնական ժողովին եւ Ազգային վարչութեան անդամներ, ազգային պատգամաւորներ, ազգային երեսփոխաններ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի շքանշանակիրներ, գործակից միութիւններու ներկայացուցիչներ եւ Ազգային Առաջնորդարանի առաքելութեան հաւատացող ու ստատար հանդիսա-

ցող բարերարներ, բարեկամներ եւ ազգայիններ:

Սոյն ընթրիքին հանդիսավարներն էին տիկնայք Թամար Մաթոսեանն ու Նաթալի Կէօքչէնեանը, որոնք ամենայն ձեռնհասութեամբ կատարեցին իրենց առաքելութիւնը:

Ազգային Վարչութեան անունով ողջոյնի խօսք արտասանեց ատենապետուհին՝ տիկին Մովիկ Թերզեանը, որ ողջունեց ներկաները, շնորհակալութեան խօսք ուղղեց բոլոր հովանաւորներուն ու ներկաներուն, մանաւանդ բոլոր այն ազգայիններուն, որոնք յարատեւօրէն նեցուկ կը կանգնին Ազգային Առաջնորդարանի ծրագիրներուն ու աշխատանքներուն, եւ շեշտեց միասնութեան ու համագործակցութեան կենսական կարեւորութիւնը:

Առաջնորդ Սրբազանը կատարեց սեղաններու օրհնութիւնը, որմէ ետք, ներկաները միասնաբար դիտեցին Ազգային Առաջնորդարանի անցնող մէկ տարուան գործունէութիւնը լուսարձակի տակ առնող տեսերիկ մը:

Ընթրիքի մթնոլորտին հայկականութեան մեծ նպաստ բերին գեղարուեստական յայտագրի մասնակիցները: Ասմունքով հանդէս եկաւ տիկին Սարին Փօլատեան-Աբիկեան: Հայրենի մեղեդիներով ու երաժշտութեամբ ելոյթ ունեցաւ դաշնակահար Եղիա Պօղոսեան: Գեղարուեստական յայտագրերին մասնակ-

ցութիւն բերին նաեւ արուեստագէտներ Լեւոն եւ Լենա Նահաս:

Այնուհետեւ ցուցադրուեցաւ Հայաստանի Սահմանամերձ Վահան գիւղին մէջ, 16 Սեպտեմբեր 2018-ին տեղի ունեցած մանկական խաղահրապարակի բացման հանդիսաւոր արարողութեան տեսերիկը: Սոյն ծրագրի իրականացման մեկնասն էր պրն. Մանուկ Չուխաճեանը:

Գեղարուեստական յայտագրի աւարտին, հանդիսավարները բեմ հրաւրեցին Սրբազան Հայրը, որպէսզի կատարէ պարգեւատրումները:

Իր բազմամեայ նուիրական ծառայութեան համար Տիար Ռաֆֆի Տէր Պօղոսեան պարգեւատրուեցաւ Ն.Ս.Ս.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին կողմէ շնորհուած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկեան Ասպետ» շքանշանով: Պատուուեցան նաեւ Տեառք՝ Կարօ Եղոյեան, Մանաս Թիթիգեան, Սամ Մանուկեան, Ճոն Մոմեան, Էտի Ուրֆալեան եւ Սիմոն Փօլատեան՝ արժանանալով Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի «Յովհան Մանգակունի» շքանշանին, իսկ օրիորդ Մարիա Չամիչեան արժանացաւ գնահատագրի՝ Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդի աշխատանքներուն իր բերած տարիներու նպաստին համար:

Երեկոյթի փակման եւ օրհնութեան խօսքը արտասանեց Առաջնորդ

Սրբազանը: Ան առաջին հերթին ողջունեց բոլոր ներկաները, շնորհակալութեան ու երախտագիտութեան խօսք ուղղեց Ազգային Առաջնորդարանի բարերարներուն ու բարեկամներուն եւ սոյն երեկոյին հովանաւորներուն, ապա ընդհանուր գիծերու մէջ անդրադարձաւ անցեալ տարուան ընթացքին իրագործուած ծրագիրներուն ու անոնց անմիջական շարունակութիւնը հանդիսացող յառաջիկայի քայլերուն:

Իր պատգամին մէջ Առաջնորդ Սրբազան Հայրը մասնաւորաբար շեշտեց. «Առաջնորդարանը իր լայնածաւալ ծրագիրներով կը գործէ ի խնդիր համայնքներու հզօրացման եւ առհասարակ մեր ժողովուրդի բարօրութեան: Ազգային Առաջնորդարանը աւելի սերտօրէն ամրապնդելով այդ գիտակցութիւնը, կը շարունակէ ընթանալ ընդհանրական շահերու իրագործման հեռանկարով»: Ապա, իր խօսքը աւարտեց անգամ մը եւս շնորհակալութիւն յայտնելով այս երեկոյթին ու ընդհանրապէս Ազգային Առաջնորդարանի ծրագիրները հովանաւորող բարերարներուն ու ազգայիններուն, մաղթեց, որ այս տարին ըլլայ բոլորին անհատական ու մեր ազգային հաւաքական կեանքին մէջ նոր նուաճումներու տարի մը:

Ընթրիքը վերջ գտաւ Առաջնորդ Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով եւ «Կիլիկիա» օրհներգով:



Ազգային Օրհներգը Ենթակալ Ձէ Փոփոխութեան Եւ Վերջ

Յանկարծ կ'իմանանք, որ անհասկնալի փութկոտութեամբ մը եւ դեռ որեւէ այլ փոփոխութիւններու չձեռնարկած՝ Հայաստանի իշխանական համակարգը հրապարակ իջած է Հայաստանի Հանրապետութեան օրհներգը փոխելու... Այո՛, սիրելիներ, ճիշդ լսեցիք. բազմաթիւ սերունդներու հաւատքով վճռահատուած ու հաստատագրուած եւ մեր ազգային միասնականու–թիւնը խորհրդանշող ազգային օրհներգը՝ «Մեր հայրե–նի՛ք»–ը այսօր յանկարծ ենթակայ է շնորհազրկման ձեր իսկ ընտրած խորհրդարանի ղեկավարութեան կողմէ։ Եւ այս գործին նախաձեռնողը նոյնինքն Հայաստանի Ազ–գային ժողովի փոխնախագահ Ալեն Սիմոնեանն է, այ–սինքն՝ վարչապետ Փաշինեանով գլխաւորուած նոր վարչակարգի կեդրոնական դէմքերէն մին ։

Իսկ ի՞նչ կը փորձէ իրագործել պրն. Սիմոնեան իր այս նախաձեռնութեամբ։ Իր իսկ վկայութեամբ, ան կ'ուզէ «Մեր հայրենիք»–ը «հանգստեան» կոչել՝ զայն յանձնելով պատմութեան զամբիւղին եւ զայն փոխա–րինելով Խորհրդային Հայաստանի «հիմն»–ով (ինչպէս անուանակոչուած էր ան խորհրդային իշխանութեանց կողմէ)։ Եւ քանի որ պրն. Սիմոնեան յայտնօրէն կ'անդ–րադառնայ, որ պոլշեւիկ իշխանութեան պատուէրով գրուած բանաստեղծ Սարմէնի բառերը ահաւոր բաներ կը պարունակեն («...ժողովրդոց սուրբ դաշինքով ստա–լինեա՛ն...»), պրն. Սիմոնեան արագօրէն կ'առնէ յաջորդ քայլը... Անջատե՛լ խորհրդային «հիմն»–ը իր սկզբնա–կան բովանդակութենէն եւ Արամ Խաչատուրեանի երաժշտական նախագծին հազցնել նոր բառեր՝ չղարշե–լով խորհրդային «հիմն»–ին էութիւնը եւ ապակողմնո–րոշելով նոր օրերու հանրութիւնը։

Իսկ ինչո՞ւ կը հիմնաւորուի, ըստ պրն. Սիմոնեա–նի, այս նոր «յեղափոխութիւն»–ը□Պրն. Սիմոնեան հա–ւատացած է, որ ի տարբերութիւն «Մեր հայրենիք»–ին՝ խորհրդային «հիմն»–ը, որ բախտաւորուած է Արամ Խաչատուրեանի երաժշտական նախագծով, կը վայելէ որակի չեջտակի առաւելութիւն մը։ Ան կը կրէ հանճարի դրոշմը, հետեւաբար օրհներգը փոխելու այս նոր գա–ղափարը չի կրնար առարկելի ըլլալ։ Այսինքն, սիրելի–նե՛ր, «յեղափոխական» այս քայլը հիմնաւորուած է զուտ գեղազրիտակա՛ն պատճառաբանութեամբ եւ ոչ ուրիշ բանով։

Անշուշտ չի յիշատակուիր այն իրողութիւնը, որ «Մեր հայրենիք»–ի դաշնաւորման հեղինակը Կոմիտա–սի հարազատ աշակերտ մեծանուն Բարսեղ Կանաչեանն է՝ հեղինա՛կը մեր ազգային կամաւորական քայլերգին՝ «Յառա՛ջ նահատակ»–ին եւ բազմաթիւ այլ երաժշտա–կան գոհարներու, եւ որ անոր երաժշտութիւնը ոչինչով չի գիջիր Խաչատուրեանի ստեղծագործութեան։ Ձի յի–շատակուիր այն փաստը, որ անոր բառերը հիմնուած են Միքայէլ Նալբանդեանի յեղափոխական երգի բառե–րուն վրայ։ Ձի յիշատակուիր այն պատմական ճշմար–տութիւնը, որ մեր ազգային օրհներգը աւելի հին է, քան՝ մեր անկախ պետականութիւնը։ Ան եղած է մեր

ազատագրական շարժման ակունքներուն վրայ, եւ որ անոր դարբնած ոգիէն է ծնած մեր անկախ պետակա–նութեան հերոսական իրականութիւնը այսօր։ Ձի յիշա–տակուիր նաեւ այն, որ «Մեր Հայրենիք»–ը (որպէս ազգային օրհներգ) սկզբնապէս օրինազրոյդ որեւէ պատահական խորհրդարան չէ, այլ մեր ժողովուրդը ի՛նք՝ իր սրտին ամէնէն անկապտելի խորերէն։ Ո՛չ, չեն յիշատակուիր այս բոլորը, քանի որ այս անհեթեթ ոտնձգութեան ետին նոյն այլասերող գաղափարախօ–սութիւնն է, նոյն թշնամի՛ն, որ միամտօրէն կարծեց մեզմէ խլել մեր օրհներգը, մեր դրօշը, մեր գինանշանն ու մեր հայրենիքը եւ պաշտօնապէս թաղել այդ բոլորին պաշտպանութեան լծուած անկեղծ գինուորը՝ Հայ Յե–ղափոխական Դաշնակցութի՛ւնը։ Վե՛րջ տուէք այս մո–լորութեան, պրն. Սիմոնեա՛ն, դուք իրական գործեր ու–նիք ընելիք, եւ մեր ազգային խորհրդանիշներու աղա–ւաղումը անոնցմէ մէկը չէ եւ չի կրնար ըլլալ։

Դուք, մենք եւ ամէն հայ խոնարհաբար պիտի լռէ եւ սորվի մեր Առաջին (եւ յաւիտենակա՛ն) Հանրապե–տութեան դարրիներէն։ 1918–ին, երբ ծով արիւններու մէջէն ծնունդ առաւ մեր անկախութիւնը, մեր հիմնա–դիր հայրերը, որոնք ազգին իսկական յեղափոխական–ներն էին, առանց այլեւայլի իւրացուցին ժողովուրդին կողմէ վաղուց վճռուած «Մեր հայրենիք»–ը՝ որպէս Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական օրհ–ներգ։ Ծաշա՛կը կը պակսէր իրենց նոր օրհներգի մը մա–սին մտածելու։ Միթէ՞ երաժշտական նրբազգացութենէ ողբալիօրէն գրկուա՞ծ էին մեր մեծերը։ Ձէի՞ն կրնար արդեօք գործի լծել իրենց ընկերներ՝ Յովհաննէս Թու–մանեանն ու Աւետիք Իսահակեանն ու Արմէն Տիգրան–եանը նոր օրհներգի մը նախագիծը կեանքի կոչելու համար։ Ո՛չ, պրն. Սիմոնեա՛ն, անոնք ընտրեցին այն, որ մեր ժողովուրդը ընտրած էր արդէն՝ յստակ, վճիտ, վճռակա՛ն... եւ ոչ ոք, ոչ իսկ մէկ հոգի, մտքին ծայրէն անցուց առարկել անոր հարազատութեան։

Եւ, անշուշտ, իրենք ճի՛շդ էին։ Մեր օրհներգը կրկին ու կրկին հրաշագործեց այն ոգին, որ մեզ պիտի առաջնորդէր ազատութեան եւ յաղթանակի։ Ամենայն տեղ մահը մի է, մարդ մի անգամ պիտ մեռնի. բայց երանի, որ իւր ազգի ազատութեան կը զոհուի... Պրն. Սիմոնեա՛ն,1921 փետրուարի 18–ին Երեւանի բանտին դիմաց գտնուող որբանոցի սաները՝ Հայոց ցեղասպա–նութենէն ճողոպրած հայրերինե՛ր, խուռներամ սկսան երգել «Մեր հայրենիք»–ը՝ առանց յստակ գիտնալու, թէ դուրսը ի՛նչ կը կատարուէր։ Իսկ բանտի պոլշեւիկ տէրերը, որոնք նոր կացինահարումներու կը պատրաստ–ուէին ի մտի ունենալով Յովհաննէս Քաջագնունին, Լեւոն Շանթը, Նիկոլ Աղբալեանը... եկան մեծ անակն–կալի՝ կարծելով, որ ապստամբութեան ալիքը արդէն կը բախէր բանտին դռները, եւ այդ ողորմելիները դիմե–ցին խուճապահար փախուստի դէպի իրենց թուրք պաշտպաններու գիրկը։ «Մեր հայրենիք»–ն էր, որ քչեց գիրենք դուրս։ «Մեր հայրենիք»–ն էր, որ տապա–

լեց պոլշեւիկեան բանտին դռները։ «Մեր հայրենիք»–ն էր, որ ազատեց վարչապետ Քաջագնունին, խորհրդա–րանի նախագահ Լեւոն Շանթը եւ կրթութեան ու գի–տութեան նախարար Նիկոլ Աղբալեանը, որոնք դեռ հարիւր տարի պիտի նետէին հիմքերը մեր անկախ պե–տականութեան։

Պէտք է ենթադրեմ, որ ազգային օրհներգին այս հսկայ կենսագրութիւնը ծանօթ չէ ձեզի։ Դուք տակա–ւին իրազեկ չէք այն իրողութեան, որ Հայաստանի վե–րանկախացման առաջին տարեդարձին օրը աշխարհի բոլոր երկիրներուն մէջ Հայաստանի դեսպանները (ի տարբերութիւն մեր ժողովուրդին) դեռեւս գիտակ չէին օրհներգի բառերուն եւ մեր երեխաներն էին, որ իրենց ջինջ վանկերով լեցուցին տօնակատարութեանց սրահ–ները։ Այդպէս էր, քանի որ օրհներգը յաջողութեամբ յաղթահարած էր գերութեան տարիները ճզմելէ ետք քանի մը կայսրութիւններ, ներառեա՛լ Խորհրդային Միութիւնը։

Տեսէ՛ք, հինգ հանրապետութիւններու բովէն անցնելէ ետք, յեղափոխութեան դրօշակիրը հանդիսա–ցող Յրանսան կը շարունակէ գուրգուրանքով պահպա–նել իր «Մարսէյէց»–ը։ Ի՞նչ պատահեցաւ յանկարծ մե–զի։ Ի՞նչ բան յանկարծ դրդեց, որ որոշենք տապալել մեր ազգային օրհներգը՝ փոխանակ տապալելու մեր երկրի տնտեսութիւնը պատուհասող մենաշնորհային համակարգը։ Եւ թախանձագին կը խնդրեմ, որ այս խաղէն դուրս պահէք մեծն Արամ Խաչատուրեանի ան–բասիր անունը։ Ինք այդ «հիմն»–ը չգրեց մեր ազգա–յին օրհներգին որպէս հակաճառութիւն։ Այդ հիմնը գրուեցաւ ողբերգական պայմաններու մէջ, երբ մեր ժո–ղովուրդը կը փորձէր վերապրիլ իրեն պարտադրուած ստալինեան եղեռնի ծանր հետեւանքներուն կուրծք տալով։

Հիմա՛ իմ վերջին խօսքը ձեզի։ Այս բոլորը ըսելէ ետք, ես տակաւին համոզուած եմ, որ դուք եւ ձեր ըն–կերները պիտի դադրեցնէք այս անորակելի արշաւը։ Համոզուած եմ, քանի որ կը հաւատամ մեր էական մի–ասնութեան։ Բայց եթէ իրօք գայ այն ողբերգական օրը եւ ձեր նախաձեռնութիւնը, հաւաքական մեծ խելագա–րութեան մը մէջ, օրինական ուժ ստանայ, եւ օրհներգը վերստին տարագրուի մեր պետականութեան կեանքէն, գիտցէ՛ք, որ ան նորէն պիտի ապրի։ Ան նորէն պիտի մնայ կանգուն եւ յաղթանակէ։ Ան պիտի նորէն մեր հերոսուհի Սօսէի բառերով յաղթականօրէն հնչէ «ամէն օր եւ ամէն ժամ», մեր հայրենիքին եւ մեր հոգեկան հայրենիքին՝ սփիւռքի մէջ, մղելով իր դարաւոր կռիւը ու ծաղր ու ծանակի մատնելով բոլոր շինծու «հիմն»–երը, բոլոր անհարազատ խորհրդանիշները, տապալելով բոլոր տխմար դռներն ու վերստին ներս գալով։ Ազգա–յին օրհներգը վերատեսութեան ենթակայ չէ։ Հեռո՛ւ կեցէք այս մոլորութենէն։

ԿԱՐՕ ԱՐՄԷՆԵԱՆ

Ուաշինկթոն

Ի Զուր... Սկիզբը էջ 3

նրան, եւ ընկերների ստիպման տակ անցաւ Խրիմ՝ դար–մանուելու համար Սաքիի հանքային բուժարանում ուր, դարձեալ ընկերների ստիպումով, գրի առաւ իր յուշերը։ Ապաքինած վերադարձաւ Թիֆլիս ցարական վարչաձե–ւի անկման նախօրեակին եւ ամբողջ էութեամբ նեո–ուեց յեղափոխական թոհուրոհին մէջ։ Թրքահայ գրաւ–ուած վայրերի առանձին նահանգապետութեան վերած–ուելը եւ գաղթականների վերադարձը նոր թափ ու ոգեւորութիւն ներշնչեց նրան։ Մասնակցեց Արեւմտա–հայ եւ Ռուսահայ Ազգային Ժողովներին, որոնց մէջ ղեկավար դեր կատարեց։ Աջ բազուկը եղաւ Թրքահա–յաստանի նահանգապետի օգնական բժ. Զաւրեանի։ 1917–ին Ազգ. Խորհրդի կողմից, իբրեւ լիազօր ներկա–

յացուցիչ, ուղարկուեց Երեւանի նահանգ, ուր նրան վի–ճակուեց պատմական դեր, Դրոյի հետ միասին, հայու–թեան պաշտպանութեան եւ Հայաստանի Հանրապետու–թեան ստեղծման գործում։ Այս շրջանում էր, որ առանձնապէս երեւան եկաւ նրա արտակարգ կարողու–թիւնը, յեղափոխական, կազմակերպական եւ պետական տաղանդը։ Ի գուր չէ, որ հանրային կարծիքը նրան է համարում Հայաստանի Հանրապետութեան հիմնադիրը։

Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ կա–ռավարութեան մէջ Արամը ստանձնեց ներքին գործոց եւ պարենաւորման նախարարի պաշտօնը։ Միակ մարդն էր, որ այդ խառնակ օրերին ընդունակ էր կարգ ու ան–գորրութիւն պահել Երկրում եւ պետական շինարարու–թիւն սկսել։ Աւա՛ղ, սակայն, կարճատեւ եղաւ նրա պաշտօնավարութիւնը։ 1918 Դեկտեմբերին, երբ բժաւոր

տիֆը աւեր էր գործում Երեւանում, Արամն էլ վարակ–ուեց եւ անկողին ընկաւ։ Տանջալից հիւանդութիւնը տեւեց մինչեւ 1919–ի Յունուար 29–ը, երբ նա փչեց վերջին շունչը։ Վերջին օրերին գառաչցանքների մէջ նա, յաճախ, յիշում էր Ռոստոմի անունը, որ արդէն հե–ռացել էր այս աշխարհից։

Հայ ժողովուրդը Արամին արաւ մի յուղարկաւո–րութիւն, որպիսին չէր տեսել Երեւանը. ամբողջ քաղա–քը լալիս էր եւ երկիւղածութեամբ հետեւում նրա դա–գադին։ Արամի մարմինը թաղուեց Երեւանի հասարա–կաց գերեզմանատանը, Հ.Յ. Դաշնակցութեան Պանթէո–նի բաժնում յաւերժական Մասիսի առջեւ։ Այդպիսի սրտաշարժ յուղարկաւորութեան արժանացել էին միայն Ս. Զաւարեանը Պոլսում եւ յետագային՝ Աւ. Ահարոն–եանը Մարսէյում ու Փարիզում։

Macron declares April 24 commemoration day of Armenian genocide in France

PARIS — French President Emmanuel Macron on February 5 declared April 24 as a day for the commemoration of the Armenian genocide in France, an issue that has caused regular friction between Turkey and European Union member states. Macron, in keeping with a 2017 campaign promise, told an annual dinner of the Co-ordination Council of Armenian Organizations in France that France was among the first nations to denounce “the mur-

derous hunt of the Armenian people in the Ottoman Empire.” France officially recognized the Armenian Genocide in 2001. Turkey accepts that many Armenians living in the Ottoman Empire were killed in clashes with Ottoman forces during World War One, but contests the figures and denies the killings were systematically orchestrated and constitute a genocide.

(Reuters)

Armenia’s Ambassador to Canada relieved from position

YEREVAN—President of Armenia Armen Sarkissian signed a decree according to which Levon Martirosyan has been relieved from the position of Armenia’s Ambassador to Canada, the Presidential Office

told Armenpress. The President signed the respective decree based on the Prime Minister’s proposal. Levon Martirosyan was serving as Armenia’s Ambassador to Canada since July 2017.

Armenia’s Head of Police meets with Deputy Minister of Ontario Matt Torigian

YEREVAN— On January 30, Head of Police of the Republic of Armenia Valeriy Osipyan received Matthew Torigian, Deputy Minister of Community Safety and Correctional Services of the Canadian Province of Ontario and acting Head of Police Initiatives at Munk School of Global Affairs and Public Policy. Expressing gratitude for warm reception, Matthew Torigian presented their programs and initiatives with the participation of law enforcement agencies from different countries. A regular one is to be implemented soon with the participation of Armenian law enforcement officers, including the Police. The program aims to make fight against corruption more effective, as well as to develop community policing. Matthew Torigian emphasized that the program gives the law enforcement agencies of different countries an opportunity to develop

professional knowledge, which will surely be applied in practice. The RA Police Chief expressed readiness not only to cooperate, but also to support. Valeriy Osipyan informed the guest that a systemic and long-term fight against corruption has started in Armenia, therefore the professional anti-corruption activities are extremely important. The Police Chief emphasized that countering corruption is one of the priorities of the current police activity. The Chief of the Police of Armenia presented Matthew Torigian with the measures taken to develop community policing, highlighting the presence of community policing in the districts and strengthening community policing-citizen communication. Issues related to the upcoming programs, as well as issues of mutual interest were discussed at the meeting.

(Police.am)

Russia welcomes Armenian-Azerbaijani ‘contacts’

MOSCOW—The Russian Foreign Ministry spokeswoman Maria Zakharova said at a briefing on January 31 that Moscow welcomed “constructive contacts” between Yerevan and Baku on the Nagorno Karabagh conflict, adding that Russia’s position on the matter is unchanged. “We perform our mediation function in good faith and, it seems to me, we do a quality job. We welcome the political contacts that took place recently between Yerevan and Baku at

various levels,” Zakharova said. She noted that Russia considers recent developments the right way to “move forward.” Armenian Prime Minister Nikol Pashinyan had an informal meeting with Azerbaijani President Ilham Aliyev in Davos, Switzerland last week on the sidelines of the World Economic Forum. Pashinyan said after the talks that the two exchanged views on the current and future steps on Nagorno Karabagh peace process.

Israeli dronemaker allowed to renew sales to Azerbaijan

YEREVAN —The Israeli Defence Ministry on February 4 allowed an aircraft manufacturer suspected of testing one of its “suicide drones” against the Armenian military on behalf of Azerbaijan in 2017, in violation of Israeli law, to again sell the unmanned aerial vehicles to the Azeris, TheTimes of Israel reports. At the same time, the export licenses of three senior officials from the defence contractor Aeronautics Ltd. — CEO Amos Matan, deputy CEO Meir Rizmovitch and a third, unnamed, employee — were to be suspended by the Defence Ministry beginning in April, the company said. The announcement was made after the Defence Ministry said last week that it had decided to revoke the export licenses of the three senior officials. The company informed the Tel Aviv Stock Exchange that the ban on sales of its Orbiter 1K kamikaze drone to its “central customer ‘A’” had ended. “The Defence Ministry announced to the company that the suspension of its license was immediately cancelled. The company can continue to supply the UAV to the aforementioned customer as soon as possible,” Aeronautics wrote.

The company also said the CEO, deputy CEO and third official were indeed being removed from the company’s export license beginning on April 3. In August 2017, the reports emerged that the company was suspected of using the Orbiter 1K kamikaze drone to attack Armenian forces in Nagorno-Karabagh during a demonstration for Azeri officials. The Israel Police’s Unit of International Crime Investigations, the Defence Ministry’s investigation unit and the State Attorney’s Office launched an investigation into Aeronautics’s conduct, but a gag order has been placed over many of its details. Aeronautics is accused of sending a team to the Azerbaijan capital Baku to demonstrate the Orbiter 1K unmanned aerial vehicle, which can be outfitted with a small explosive payload of 2.2 to 4.4 pounds (one to two kilograms) and flown into an enemy target on a “suicide” mission. According to the complaint against the company, while demonstrating the kamikaze drone to the Azerbaijani military in July 2017, the company was asked to carry out a live-fire test of the system against an Armenian military position.

(Armradio)

In Berlin, Pashinyan, Merkel discuss EU relations, Karabagh

BERLIN—Prime Minister’s Nikol Pashinyan and German Chancellor Angela Merkel on February 1st discussed a wide range of issues, among them advancing Armenia’s relations with the European Union and a peaceful resolution to the Nagorno-Karabagh conflict. Hosting Pashinyan at the German Chancellery, Merkel praised Pashinyan for taking “brave steps” toward the resolution of the Karabagh conflict and urged Azerbaijan to follow suit. Speaking at a joint press conference with Pashinyan, Merkel said she was confident that the Armenian leader would continue his efforts, but urged for a final resolution to the conflict. “As you may know, I made an announcement in parliament months ago which I consider

very important. I have said that any option for the resolution of the Nagorno Karabagh conflict should be acceptable for the people of Armenia, people of Karabagh and people of Azerbaijan,” Pashinyan told Merkel. “I had hoped that a similar announcement would come from the Azerbaijani side, but no Azerbaijani official—even with in a muted voice—has said that any resolution to Karabagh issue can be acceptable for the people of Armenia and Karabagh,” added Pashinyan who explained that Armenia does not have great hopes of moving forward on the matter, without reciprocal announcements from official Baku. While reiterating Armenia’s commitment to an exclusively peaceful resolution to the con-

flict, Pashinyan also pointed out that he can only negotiate on behalf of Armenia but not on behalf of the people of Artsakh, explaining that they have their own government that can negotiate on their behalf. “I, as the Prime Minister of Armenia, can negotiate on behalf of the Republic of Armenia, but I cannot negotiate on behalf of Karabagh for the simple reason that the people of Nagorno-Karabagh do not participate in our elections and have not voted for me. They have their own president, parliament, government and only representatives chosen by the people of Karabagh can speak on behalf of Karabagh,” Pashinyan told Merkel. Pashinyan also praised Ger-

Continued on page E2

Diaspora survey provides a snapshot of Armenians in 21st Century

LONDON—More than 1,000 Armenians in four cities in the Diaspora took part in a first ever survey led by a team of academics, researchers and experts. This pilot phase of an ongoing larger project aims to provide a snapshot of the contemporary Diaspora. The Armenian Diaspora Survey (ADS) is a new initiative launched and funded by the Armenian Communities Department of the Calouste Gulbenkian Foundation and carried out under the auspices of the Armenian Institute in London. “We have initiated this study to fill a critical gap in our knowledge of the Diaspora, to have evidence-based understanding of the multilayered and diverse aspects of diasporic life in our times,” said Dr. Razmik Panossian, Director of Gulbenkian Foundation’s Armenian Communities Department. In May and June 2018 four teams conducted the survey and interviews in Boston, Cairo, Marseille and Pasadena. These

cities were chosen to provide variety for the initial phase, as well as for their community history and characteristics. A set of other cities are in the process of selection for survey this year. “We asked people about their thoughts on identity and related issues of belonging as Armenians and as citizens of different states,” explained Dr. Susan Pattie, who led the pilot project. An international advisory committee, a dedicated team and 12 field work researchers were involved in the project, which took about 18 months to develop the methodology, research tools, fieldwork preparations, survey administration and data processing. For institutional and community leaders in the Diaspora, as well as policy-makers in Armenia, ADS provides valuable research-based information as to what the issues and thinking in the Armenian communities are today and how to serve their needs.

The data and the knowledge gained from the survey will be available to scholars as a resource for further research. Some initial findings stand out in the first stage of the research. These are only preliminary results from the pilot phase of the survey in four cities. The overwhelming majority of the respondents consider the continuation of the Armenian diaspora as important and meaningful space—94 percent marked as “fairly” to “very” important. Along these lines, 84 percent of respondents thought it was important to help diaspora communities in the Middle East. This is significant as traditionally the Genocide and the Republic of Armenia have been the focus of funding, study or discourse in the Diaspora. The respondents showed interest in all of these, but considered the diaspora equally important. Armenia is “fairly” and “very” im-

Continued on page E2

“A careful, cautious approach to cannabis regulation is what Canadians expect of us”

MINISTER BLAIR EXPLAINS TO MEDIA ORGANIZATIONS

MONTREAL—As Canada begins its first full year with legal cannabis on the market, government officials and Ministers are now vying for the public’s confidence in their current approach. Communities have sought clarity on the precise impacts the new set of rules will have on them, issues ranging from safety standards to licensing.

To this effect, Horizon Weekly, represented by assistant-editor to the English supplement Goryoun Koyounian, was invited, along with several other local and ethnic media organizations, to a round-table held by Minister of Border Security and Organized Crime Reduction William Blair on January 19. The topic, of course, concerned cannabis legalization.

A former Toronto police chief with experience in prohibition enforcement, Bill Blair was tasked last year with leading the legalization and regulation of cannabis in a way which ensures public safety, promotes responsible usage and keeps it away from children. One of the premises of this initiative, one which Mr. Blair highlighted repeatedly, is that the cannabis is a non-lethal drug whose risks can be managed through rules and regulations, unlike certain synthetic drugs like methanol which he says ought to remain prohibited.

Indeed, when asked about concerns relating to long-term detrimental effects on the health, including attention-deprivation, he pointed to other substances, such as alcohol and even sugar, which pose risks in their own different ways. Both of those are sold on the legal market and regulated in accordance with the various health and safety standards set by the government. The Minister argued that same principle

can and should be applied to the cannabis.

Minister Blair also stressed the importance of the third objective, namely keeping the products away from children, on whom cannabis can pose the largest negative impacts. The previous regime of prohibition, he argued, was unsuccessful in this respect: minors often had unencumbered access to the drug through illicit sources, and Canadian youth often reported a relatively high rate of consumption. Speaking out of personal experience, Mr. Blair deplored that, rather than being taught about responsible use and the various health risks, children would often be simply sent to prison for being caught smoking marijuana.

Under the new regime, police officers can now seize a drug found in the hands of a minor, they can administer a fine, and they can also send the child home to his/her parents. This would be, the Minister insisted, an appropriate and proportionate response that educates the child without going so far as giving him a permanent criminal record.

Equal emphasis was placed on the priority of public safety, more precisely the goal of displacing the illicit cannabis market and redirecting organized crime’s profits towards legal retailers. Horizon asked Mr. Blair whether he believes the government has found a right balance between ensuring the accessibility of legal cannabis, critical to displacing the illicit market’s hold, and protecting the youth. The Minister believes they have, though adding that the regulation of cannabis in Canada remains an unfinished process, and that the government will keep monitoring trends and adjusting policy based on new evidence.

BERLIN...

continued from page E1

many-Armenia relations, pointing to Merkel’s recent visit to Armenia and his current talks in Berlin as a sign of a strong alliance where both sides view regional stability, peace and security as a priority.

He also said that Armenia was positioned to advance reforms that could facilitate further economic and political cooperation only with Germany but also the European Union.

